# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

08.10.2018թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

## թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/98

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 07.09.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

**1. <u>«ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ն 07.09.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Երևան քաղաքի թիվ 57, 96 և 134 մանկապարտեզներում անավարտ մնացած վերանորոգման» աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 17.08.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1.3-րդ կետի համաձայն՝ «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ն Ընթացակարգի 1-ին, 2-րդ, և 3-րդ չափաբաժինների մասով

ներկայացրել է համապատասխանաբար 26.589.600 ՀՀ դրամ, 27.518.400 ՀՀ դրամ և 11.580.000 ՀՀ դրամ գնային առաջարկներ և արձանագրության 1.6 կետով ճանաչվել՝ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից՝ 1-ից 3-րդ չափաբաժիններով:

Նույն արձանագրության նույն կետով 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Արտֆլոր» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը 27.08.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.4 կետով որոշեց մերժել «Արտֆլոր» ՍՊԸ-ի հայտը և նույն չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ին:

03.09.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացության հիման վրա «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի հայտարարությունը համարվել է իրականությանը չհամապատասխանող:

Նույն արձանագրության 1.4 կետով Հանձնաժողովը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց պարտավորություններ՝ 274.000 ՀՀ դրամի չափով, որոշեց մերժել Ընկերության հայտը:

Հարկ ենք համարում նշել, որ նույն օրը «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել մեկ այլ՝ ԾՀ-ԳՀԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգին և ճանաչվել առաջին տեղ զբաղեցրած մասնակից 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով: Ընդ որում, ընթացակարգի հանձնաժողովի 17.08.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է, որ համաձայն 16.08.2018թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացության՝ առաջին տեղ զնաղեցրած մասնակիցը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ոիևէ ժամկետանց պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2.1 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ նույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկյացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Այսպիսով, գտնում ենք, որ Հանձնաժողովի կողմից «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի հայտը մերժելու որոշումը իրավաչափ չէ, և կայացված է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի խախտումով, քանի որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել ՀՀ պետական բյուջեի նկատմամբ իր գնային առաջարկի մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց պարտավորություն, ինչը ապացուցվում է նաև ԾՀ-ԳՀԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացությամբ և ընթացակարգի հանձնաժողովի 17.08.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ:

«ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է.

1. Պարտավորեցնել ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ՆիկԴավ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանող գնահատելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել «ՆիկԴավ» ԲԲԸ-ին ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին համապատասխան որոշումը:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչ Վարդան Սիմոնյանը:

**2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը դիմել է Երևանի քաղաքապետարանին՝ խնդրելով բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր քաղաքապետարանի կողմից լիազորված ներկայացուցիչ Գոռ Մուրադյանը:

**3. ԳԲԽ-ԷՍ-2018/98 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 07.09.2018թ ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32 ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր) ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 27.08.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 և 03.09.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, ԾՀ-ԳՀԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 16.08.2018թ. տրված եզրակացությունը, 17.08.2018թ. դրությամբ Ընկերության՝ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի կողմից 31.08.2018թ. ԻնեկոՕնլայն բանկային համակարգի միջոցով կատարված վճարման հանձնարարականը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կողմից Բողոքներ քննող անձի հարցմանն ի պատասխան 03.10.2018թ. թիվ 47137-18 գրությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ին ուղղված 01.10.2018թ. թիվ 2046 գրությունը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի թիվ 57-րդ, 96-րդ և 134-րդ մանկապարտեզներում անավարտ մնացած վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ ընթացակարգ):

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը՝

- 27.08.2018թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.4 ենթակետով որոշել է Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ին:

- 03.09.2018թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով արձանագրել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ կոմիտե) հարցում է կատարվել առաջին տեղ զնաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ և սահմանված ժամկետում կոմիտեի կոմղից ստացվել է եզրակացության, որի համաձայն՝ «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 274.000 ՀՀ դրամ գումարի չափով:
- նույն արձանագրության 1.4 ենթակետով որոշել է «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Բողոքի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 30.08.2018թ. տրամադրած եզրակացության համաձայն՝ «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (17.08.2018թ.) ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն՝ 274.000 ՀՀ դրամ գումարի չափով, մինչդեռ Ընկերությունը այդ ժամանակահատվածում մասնակցել է մեկ այլ ընթացակարգի, որի շրջանակներում 16.08.2018թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացության համաձայն՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ այնուամենայնիվ 31.08.2018թ. կատարել է 275.000 ՀՀ դրամ գումարի չափով վճարում և կատարված վճարման հանձնարարականում արտացոլված է, որ վճարման ենթակա գումարը դրոշմանիշային վճարման գծով է: Ընկերության ներկայացուցիչը հավելեց նաև, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ հայտը ներակայացնելու օրվա դրությամբ (17.08.2018թ.) հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ առկա չեն:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» 17.08.2018թ. դրությամբ քաղվածքը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ, որի համաձայն Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող

եկամուտների գծով պարտավորություններ չունի, ինչպես նաև ԾՀ-ԳՀԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 16.08.2018թ. տրված եզրակացությունը և 31.08.2018թ. ԻնեկոՕնլայն բանկային համակարգի միջոցով կատարված վճարման հանձնարարականը:

Բողոքներ քննող անձը 20.09.2018թ. գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, խնդրելով տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե նշված 274.000 ՀՀ դրամ հարկային պարտավորությունը որ հարկատեսակի գծով է և երբ է գոյացել:

Ի պատասխան Բողոքներ քննող անձի 20.09.2018թ. գրության, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 03.10.2018թ. թիվ 47137-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ «ՆԻԿԴԱՎ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերության (ՀՎՀՀ 01829142) 27.08.2018թ. թիվ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32 գնման ընթացակարգի ծածկագրով եզրակացության մեջ արտացոլված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց 274.000 դրամ պարտավությունը՝ 16.08.2018թ. դրությամբ, առաջացել է դրոշմանիշային վճարը չվճարելու արդյունքում:»:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 01.10.2018թ. թիվ 2046 գրությամբ «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ին հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՎՍՎ թիվ 6 բաժնում հաշվառված «ՆԻԿԴԱՎ ԳՐՈՒՊ» ԲԲ ընկերության (ՀՎՀՀ 01829142) 16.08.2018թ. օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավությունը կազմում էր 274.000 դրամ՝ դրոշմանիշային վճարից, որի առաջացման հիմքն է համարվում 2017թ. սեպտեմբերից եկմատային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկներից արտացոլված հանրագումարը:»:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական

եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Երևան քաղաքի թիվ 57, 96 և 134 մանկապարտեզներում անավարտ մնացած վերանորոգման» աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ»

որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

- 7.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամա¬դրում է հարցման մասին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում սույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն հրավերի 1-ին մասի 7.20 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ

տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 30.08.2018թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (17.08.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 274.000 ՀՀ դրամ:

- «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ն հայտը ներակայացնելու օրը առաջնորդվել է Ընկերության «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն՝ «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (17.08.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն առկա չէ:

- ԾՀ-ԳՀԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 16.08.2018թ. տրված եզրակացության համաձայն՝ «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա (08.08.2018թ.) դրությամբ հարկային պարտավորություններ չունի:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկությունը կարող էր ձեռք բերել

բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ տվյալ դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (17.08.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի կողմից 07.09.2018թ ներկայացրած բողոքը բավարարել:
2. Պարտավորեցնել ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանող գնահատելու մասին որոշումը:
3. Պարտավորեցնել ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունել «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ին ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

**ՀՀ գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝**

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ